

© Եվրոպայի խորհուրդ/ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2013: Սույն թարգմանությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդի (www.coe.int/humanrightstrustfund) աջակցությամբ: Այն որևէ կերպ չի պարտավորեցնում Դատարանին: Ավելին իմանալու համար ծանոթացեք սույն փաստաթղթի վերջում ներկայացված հեղինակային իրավունքի վերաբերյալ նշումներին:

© Council of Europe/European Court of Human Rights, 2013. This translation was commissioned with the support of the Human Rights Trust Fund of the Council of Europe (www.coe.int/humanrightstrustfund). It does not bind the Court. For further information see the full copyright indication at the end of this document.

© Conseil de l'Europe/Cour européenne des droits de l'homme, 2013. La présente traduction a été effectuée avec le soutien du Fonds fiduciaire pour les droits de l'homme du Conseil de l'Europe (www.coe.int/humanrightstrustfund). Elle ne lie pas la Cour. Pour plus de renseignements veuillez lire l'indication de copyright/droits d'auteur à la fin du présent document.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային տեղեկատու թիվ 121

2009թ. հուլիս

Willem-ն ընդդեմ Ֆրանսիայի - 10883/05

Վճիռ 16.07.2009թ. [Բաժանմունք V]

Հոդված 10

Հոդված 10-1

Արտահայտվելու ազատություն

Քաղաքապետին քրեական մեղադրանքով դատապարտումը՝ քաղաքապետարանում իսրայելական արտադրանքը բոյկոտելու մտադրության մասին հայտարարություն անելու համար. *խախտում չկա*

Փաստեր. 2002թ. քաղաքապետարանի խորհրդի հանդիպմանը, որտեղ ներկա էին նաև լրագրողները, դիմումատուն՝ քաղաքապետը, հայտարարեց քաղաքապետարանում իսրայելական ապրանքները բոյկոտելու իր մտադրության մասին՝ որպես Իսրայելի կառավարության կողմից իրականացվող հակապաղեստինյան քաղաքականության դեմ բողոք: Նրա հայտարարությունը տպագրվեց մի թերթում: Ի պատասխան այն արձագանքներին, որն առաջացրել էր հոդվածը, մի քանի օր անց դիմումատուն բաց նամակ տեղադրեց քաղաքապետարանի ինտերնետ կայքում: Իսրայելական համայնքի ներկայացուցիչները բողոք ներկայացրեցին գլխավոր դատախազին, որը մեղադրանք առաջադրեց դիմումատուի դեմ՝ ազգային, ռասայական և կրոնական խտրականություն հրահրելու համար: Դիմումատուն արդարացվեց քրեական դատարանի

կողմից, սակայն մեղավոր ճանաչվեց գործի վերաքննության արդյունքում և տուգանվեց 1,000 եվրո գումարի չափով: Նա վճռաբեկ բողոք ներկայացրեց, սակայն հաջողության չհասավ:

Իրավունք. Դիմումատուի դատապարտումը, որը հանդիսանում էր «միջամտություն» նրա արտահայտվելու ազատության իրականացմանը, հիմնված էր 1881թ. ընդունված «Մամուլի մասին» օրենքի վրա, որը հղում էր կատարում Քրեական օրենսգրքի դրույթներին: Միջամտության նպատակն էր պաշտպանել այլ անձանց և հատկապես խարայելական արտադրողների իրավունքները: Այնուամենայնիվ, քաղաքապետի՝ արտահայտվելու ազատության իրականացման միջամտությունը Դատարանից պահանջում է ցուցաբերել հատուկ ուշադրություն: Սույն գործում դիմումատուն դատապարտվել էր ոչ թե իր քաղաքական հայացքների, այլ հանձնաժողովին խտրական գործողությունների հրահրելու համար: Նա ոչ միայն մեղադրել էր Արիել Շարոնի կառավարությանը իր վարած քաղաքականության համար, այլ ավելին, կոչ էր արել բոյկոտել խարայելական արտադրանքը: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հաշվի էր առել ոչ միայն խորհրդի հանդիպմանը դիմումատուի՝ բոյկոտելու մասին բանավոր կոչերը, այլև՝ քաղաքապետարանի ինտերնետ կայքում տեղադրված նրա հաղորդագրությունը, որը խորացրել էր դիմումատուի դիրքորոշման խտրական բնույթը: Քաղաքապետի պաշտոնը դիմումատուի համար ենթադրում էր որոշակի լիազորություններ և պարտականություններ: Մասնավորապես, նա պարտավոր էր որոշակի չեզոքություն ցուցաբերել և հայեցողություն դրսևորել, երբ հանդես էր գալիս այն համայնքի անունից, որը ներկայացնում էր: Դիմումատուն գուցե մտադիր էր իր բողոքն արտահայտել Իսրայելի վարչապետի քաղաքականության դեմ, բայց բոյկոտի համար բերված պատճառները և՛ հանդիպման ժամանակ, և՛ ինտերնետ կայքում խտրական բնույթ ունեին և այդպիսով դատապարտելի են: Դիմումատուն չէր մեղադրվել կամ դատապարտվել իր քաղաքական հայացքների համար, որոնք ընկնում են արտահայտվելու ազատության իրավունքի ներքո, այլ ավելի շուտ քաղաքապետարանի աշխատակիցներին պոզիտիվ խտրականության գործողությանը մասնակցելուն կոչեր անելու համար՝ հատկապես խարայելական արտադրողների հետ բոլոր տեսակի առևտրային հարաբերությունները բացահայտորեն և վճռական կերպով խզելու հարցում: Հաշվի առնելով քաղաքապետարանի խորհրդի հանդիպման ժամանակ կատարած հայտարարությունը, որը արվել էր առանց որևէ քննարկման կամ քվեարկության, և քաղաքապետարանի ինտերնետ կայքում տեղադրած հաղորդագրությունը՝ դիմումատուն չէր կարող պնդել, որ նա ազատ քննարկումներ է անցկացրել ընդհանուր շահ հետապնդող հարցի շուրջ: Բացի այդ, դատախազը ազգային դատարաններում իր փաստարկները ներկայացնելիս նշել էր, որ քաղաքապետը իրավասու չէր պետական մարմինների անունից հանդես գալ արտասահմանյան պետությունից ներմուծվող ապրանքի վրա արգելք դնելու մասին հայտարարությամբ:

Նման հանգամանքներում ֆրանսիական դատարանների փաստարկները, որով հիմնավորվել էր տեղի ունեցած միջամտությունը դիմումատուի՝ արտահայտվելու ազատության իրականացմանը, եղել են «հիմնավոր և բավարար»՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված նպատակների համար: Հաշվի առնելով վերոնշյալը և տեղական իշխանություններին շնորհված թույլատրելի հայեցողության շրջանակը՝ վիճարկվող միջամտությունը համաչափ էր հետապնդվող օրինական նպատակին:

Եզրակացություն. խախտում չկա (ձայների վեց կողմ և մեկ դեմ հարաբերակցությամբ):

© Council of Europe/European Court of Human Rights
This summary by the Registry does not bind the Court.

Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դատարանի քարտուղարության այս ամփոփումը պարտադիր չէ Դատարանի համար

Սեղմեք այստեղ [Նախադեպային տեղեկատվությունների համար](#)

© Եվրոպայի խորհուրդ/ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2013

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պաշտոնական լեզուներն են ֆրանսերենը և անգլերենը: Սույն թարգմանությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդի (www.coe.int/humanrightstrustfund) աջակցությամբ: Այն որևէ կերպ չի պարտավորեցնում Դատարանին, որը պատասխանատու չէ թարգմանության որակի համար: Այն կարելի է բեռնել HUDOC-ից՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի տվյալների բազայից (<http://hudoc.echr.coe.int>), կամ տվյալների ցանկացած այլ բազայից, որին HUDOC-ը տրամադրել է փաստաթուղթը: Այն կարող է վերաթողարկվել ոչ առևտրային նպատակներով՝ պայմանով, որ գործի անվանումը ներկայացվի ամբողջական և ուղեկցվի վերը նշված հեղինակային իրավունքի նշումներով, ինչպես նաև Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդին հղումով: Առևտրային նպատակներով սույն թարգմանությունը մասնակիորեն կամ ամբողջապես օգտագործելու դեպքում, հարկ է այդ մասին տեղեկացնել հետևյալ հասցեով՝ publishing@echr.coe.int

© Council of Europe/European Court of Human Rights, 2013

The official languages of the European Court of Human Rights are English and French. This translation was commissioned with the support of the Human Rights Trust Fund of the Council of Europe (www.coe.int/humanrightstrustfund). It does not bind the Court, nor does the Court take any responsibility for the quality thereof. It may be downloaded from the HUDOC case-law database of the European Court of Human Rights (<http://hudoc.echr.coe.int>) or from any other database with which the Court has shared it. It may be reproduced for non-commercial purposes on condition that the full title of the case is cited, together with the above copyright indication and

reference to the Human Rights Trust Fund. If it is intended to use any part of this translation for commercial purposes, please contact publishing@echr.coe.int.

©Conseil de l'Europe/Cour européenne des droits de l'homme, 2013

Les langues officielles de la Cour européenne des droits de l'homme sont le français et l'anglais. La présente traduction a été effectuée avec le soutien du Fonds fiduciaire pour les droits de l'homme du Conseil de l'Europe (www.coe.int/humanrightstrustfund). Elle ne lie pas la Cour, et celle-ci décline toute responsabilité quant à sa qualité. Elle peut être téléchargée à partir de HUDOC, la base de jurisprudence de la Cour européenne des droits de l'homme (<http://hudoc.echr.coe.int>), ou de toute autre base de données à laquelle HUDOC l'a communiquée. Elle peut être reproduite à des fins non commerciales, sous réserve que le titre de l'affaire soit cité en entier et s'accompagne de l'indication de copyright ci-dessus ainsi que de la référence au Fonds fiduciaire pour les droits de l'homme. Toute personne souhaitant se servir de tout ou partie de la présente traduction à des fins commerciales est invitée à le signaler à l'adresse suivante : publishing@echr.coe.int.